



Զապել Եսայան

Քողը

3

Ամիսներ անցեր էին. Ատիլէ՝ քաղքենիի իր նոր դիրքին բոլորովին ընտանեցած էր Ոսկեղջիւրի թաղերէն մէկուն մէջ, եռայարկ, կարմիր ներկուած, փայտաշէն տան մը մէջ, ճերմակ վանդակներուն ետեւ, կիսաստուերի մէջ շղարշուած, անիկա կը սպասէր իր սպային, ինչպէս երագած էր երբեմն. իր բոլոր իղձերը կատարուեր էին ու նիքեահին օրը իր քօղը առաջին անգամ բացողը իր սիրական ձիաւորը եղած էր:

Ինչպէ՛ս գեղեցիկ էր Ալի Հասան այն օրը... յարատեւ կերպով այդ պատկերը կը ներկայանար Ատիլէի, երբ ամուսնոյն բացակայութեանը՝ անոր վրայ կը խորհէր. կը մտաբերէր անոր պաշտօնական համազգեստը, լայն կտրծքը որուն վրայ պատուանշաններու ոսկին եւ արծաթը զինքը շլացուցին, երբ առաջին անգամ, Ատիլէ երեսը ու գլուխը բաց դէմ առ դէմ գտնուեցաւ այր մարդու մը հետ, խպնտութեան անդիմադրելի զգացում մը հարսնուկի մը պէս զինքը կարմրցուց. երկուքն ալ լուռ էին:

Ինքք կը զգար գլխուն վրայ ոսկեթելերով զարդարուած տիաստէնը որ կը դողդղար ու իրեն կը թուէր որ պիտի իյնար. փեսան այնքան մօտ կեցած էր իրեն որ կ'զգար անոր գաղջ շունչին փայփայանքը այտին վրայ. ճշմարիտ ծաղիկներու բուրուճը, խնկամաններու մէջերէն սլացող կնդրուկի ցից ծուխերուն հետ զինքը կարծես կը շղարշէին. դուրսէն կը լսէր արեւելեան նուագածոններու երկարաձգուող ու մելամաղձոտ երգերը ու հեռուներէն իրեն ականջին կուգար

թմբկահարութեան մը բաբախուն աղմուկը... հարսնետրներու ժխորը, հարէմին մէջ փակուած կիներու ճռուողիւնը, օշարակներու եւ քաղցրեղէններու չափազանցութենէն յառաջ եկած իր թեթեւ սիրտ խառնուութիւնը, տեսակ մը անկարողութեան կը մատնէին զինքը: Այդ միջոցին Ատիլէ կը փափաքէր անհետանալ չքանալ... ու իրեն կը թուէր որ երբեք իր աչքերը չպիտի կարենար բարձրացնել դէպ ի իր տէրը, իր ամուսինը... բայց ահա խօլ եւ սանձարձակ գուարթութիւն մը մտրակեց զինքը. կարծես հոգին կ'արձակուէր իր կապանքներէն. իր վայրենի բնութիւնը կը խնդար իր մէջ. Ատիլէ գլուխը բարձրացուց մէկէն ու աչքերը կայծկլտուն երջանկութիւնով սեւեռեց իր փեսին վրայ. կը տեսնէ՞ր զայն ամբողջովին այդ պահուն. ի՞նչ փոյթ. տարտամ ու գորովագին զգացում մը վերացուց զինքը ու անհունօրէն երջանիկ էր, ինքզինքը ստրուկի մը պէս նսեմ, խոնարհ, եւ սին զգալով, իր փառաւոր, իր շքեղ սպային քով:

Ալի Հասան փափկութեամբ ու վեհանձնութեամբ վարուեցաւ իր հետ ամուսնութեան առաջին օրերուն եւ բոլորովին գրաւեց կնոջը սէրը որ մեծապէս տոգորուած էր հնազանդութեան եւ բացարձակ համակերպութեան զգացումով, գոհ էր որ կեսուրը խիստ էր իրեն նկատմամբ ու զինքը կը պահէր զոց վանդակներու ետեւ: Ամբողջովին նուիրուած ըլլալը իր տիրոջը, առանց որ իր զգացումներուն եւ մտածումներուն մէջ օտար ո եւ է երանգ մտնէր, վայելք մըն էր իրեն համար:

Անուս աղջիկ էր ու իր քաղքենիի դաստիարակութիւնը անխնամ. անհկա բան մը չէր սորված նոյն իսկ ընթացիկ ձեւակերպութիւններէն, սովորութիւններէն. հնազանդելու եւ խոնարհելու իր ձգտումին մէջ. յաճախ պարզ աղախինի երեւոյթներ կ'ստանար մանաւանդ իր կեսրոջը հանդէպ՝ որուն զիտակ, արհամարհոտ եւ ատելափառ կնոջ ազդեցութիւնը կ'ահաբեկէր զինքը: Ատիլէ չկրնալով ըմբռնել Չէհէր հանրմի բո՛ւն զգացումները, անստուգութեան մէջ կ'իյնար իր անհատական արժէքին նկատմամբ ու կարծես կը համաձայնէր որ ինքը արժանի չէր Ալի Հասանի. երբ մանաւանդ բարեկամուհիներ այցելութեան կուգային, նոր հարսին անձարակութիւնը տատապանք մը կը դառնար. որքա՛ն պիտի ուզէր որ Չէհէր հանրմը չամբռնար իրմէն, որքա՛ն պիտի ուզէր որ իր շարժումները ստանային այն սեթետեթները որոնք իրեն թէ հիացում եւ թէ

նախանձ կ'ազդէին ուրիշ դեռատի աղջիկներու վրայ:

Ու ինքը կը տանջուէր այդ բոլորին իր անձին համար յայտնած արհամարհանքէն ո՛չ թէ ինքզինքին համար, այլ Ալի Հասանի համար. կարծես ամէնքը ըսել կ'ուզէին. «Ա՜ս է այդ աղջիկը»: Ու կեսուրը չէր քաշուեր բնաւ ու իր տհաճութիւնը կը յայտնէր ու իր բարեկամութիւններուն հետ կը համաձայնէր որ իր տղան կախարդուած էր անշուշտ. աչքերը կապուած էին:

Բայց իր ամուսնոյն ներկայութեան Ատիլէ վերստին կը գտնէր իր բոլոր գուարթութիւնը եւ երիտասարդական աւիւնը. իր աչքերը լոյս կը ստանային, իր այտերը կը գունաւորուէին. կարծես ներքին հուր մը կը վառէր իր հոգիին մէջ ու կը լուսաւորէր իր էութիւնը պայծառ լոյսով մը: Իր սիրականին սէրը կը կրէր յուզուած շփոթութեամբ մը ու իր անսահման գորովանքին մէջէն հեշտագին խոնարհութեամբ մը կը զգար անոր տիրական հրայրքը:

Ալի Հասան, յոգնած պատահական եւ անստոյգ հանդիպումներէ, մեծ երջանկութիւն մը զգացեր էր իր ամուսնական կեանքին մէջ, անիկա կը սիրէր իր կինը, թէեւ իր գերազանց մարդու ինքնագիտակցութեամբ Բայց կատարեալ համարումով. գիտէր որ այդ պարզ եւ անուս աղջիկը որ այնքան յօժարակամ կը ճկէր իր եւ մանաւանդ մօրը քմահաճոյքներուն, Իպրահիմի աղջիկն էր, ու աներոջը համար ունեցած յարգանքը բացառիկ շուք մը կուտար իր կնոջը. որովհետեւ բնագոյով կը զգար որ անիկա իր հօրը պէս կարող էր օր մը բարձրանալու վեր, շատ վեր, ու արտասանելու այնպիսի խօսքեր, որոնց նմանները անկարող էին իրենք արտասանել:

Բայց երբ իր ցանկութիւնը մարեցաւ հետզհետէ, երբ սկսաւ նուազ անհամբերութեամբ տուն դիմել, աստիճանաբար մոռցաւ նաեւ իր կնոջ մասին զգացած յարգանքը:

Ազատամիտ մարդ էր ինքը ու նոր միտքեր դրողներ էին իր Իսլամի խստութիւնները կնոջ նկատմամբ. իր ընկերներէն ոմանք Եւրոպացի կիներու հետ ամուսնացեր էին ու ճանչցեր էր անոնց ազատ եւ համերաշխ կենցաղը. ինքն ալ միջոց մը մտադիր էր Քրիստոնէայ կին մը առնել, իր տան մէջ մտցնելու համար այն նոր եւ թարմ օդը որուն կը տենչար իր երիտասարդի ձգտումներով: Իր

նեղսրտութեան բռնութիւնն դժգոհութեամբ կը ստածէր թէ՛ ճակատագիրը տարբեր կերպով տնօրինէր էր իրեն համար: Ատիլէի խոնարհութիւնը ու քաղցրութիւնը ծաղրելի ու անտանելի կը թուէին իրեն, մինչ սիրոյ առաջին օրերուն այդ օտար անուանութիւններուն անպատեհութիւնները կը տեսնէր միայն եւ խորապէս կը զգար որ այդ երեսը բաց, ու ամէն տեղ մտնող ելլող կիներուն հետ երբե՛ք չպիտի ունենար այն նուրբ եւ անսահմանելի զգացումը որ իր քողարկուած եւ ընկերներուն աչքերէն հեռու պահուած կիներ կը ներշնչէր իրեն: Նոյն իսկ սիրոյ առաջին թափին մէջ, վագրի պէս նախանձոտ դարձեր էր ու դժգոհութեամբ կը յիշէր որ առաջին անգամ Ատիլ պէյ ալ տեսեր էր իր կիներ:

Բայց վերջապէս իր բոլոր զգացումները կը մեղմանային. տակաւ առ տակաւ Ալի Հասան սկսաւ յիշել ամուրիի կեանքին գուարճութիւնները. օր մը անդիմադրելի կերպով փափաք զգաց երթալ տեսնելու Եւրոպացի կին մը որ զինքը այնքա՛ն խնդացուցած էր ժամանակին. երգեցիկ սրճարանները սկսան իր վարժ քայլերը հրաւիրել. սակայն եւ այնպէս չէր դադրած իր կիներ սիրելէ ու անոր քով անցուցած միջոցը կը նկատէր իր կեանքին երջանկագոյն ժամերը:

Ջէիէր հանրմ նախ տհաճութեամբ դիտելէ ետքը իր տղուն կնոջը նկատմամբ ունեցած բոլորանուէր սէրը, հաճոյքով անդրադարձաւ որ անոր հրայրքը տկարացաւ: Հարէմի փակ եւ դատարկ սենեակներուն մէջ ձանձրոյթը իր գորշ մշուշը կը դնէր, ամէն բան սկսեր էր գունատիլ. բազմոցներուն կարմիր թափշը, ոսկեդրուագ կարասիներուն ջնարակը, արհեստական ծաղիկներուն երանգները կը կորսնցնէին հետզհետէ իրենց փայլն ու հրապոյրը, ու այդ հետզհետէ թառամող եւ փոշիացող շրջանակին մէջ՝ Ալի Հասանի աչքերը նոյն խանդավառութեամբ չէին տեսներ իր կիներ:

Հետզհետէ մօրը նենգաւոր եւ յամառ գանգատները իրենց պտուղը տուին, Ալի Հասան բարեացակամութեամբ խորհուրդներ տալէ ետքը Ատիլէի, սկսաւ սրտնեղութեամբ գայն յանդիմանել:

Ինչո՞ւ այդպէս ձեռքերդ ծալլած կը մնաս, կարծես թէ աղախին ես:

Ատիլէի մանկունակ աշքերուն մէջ ցաւի եւ անկարողութեան արցունքները կը փայլէին. ինքն ալ չէր գիտէր թէ ի՞նչպէս վարուէր, ի՞նչպէս շարժէր. զգաց որ ամուսինը արհամարհոտ կը դառնայ օրէ օր. այլեւս իրենց մտերմական խօսակցութիւնները շատ կարճ էին. Ալի Հասան իրեն չէր հաղորդեր իր հոգերը եւ յոյսերը, այլ միայն մօրը՝ որուն հետ երկար, առանձին խօսակցութիւններ կ'ունենար ու ինքը դուրսը կը մնար, իբր թէ օտար ըլլար:

Եւ ահա յանկարծ Ատիլէ զգաց դառնօրէն իր դասակարգին յատուկ թշուառութիւնը. հակառակ իր խոնարհութեան եւ համակերպութեան արտասովոր ձայն մը լսեց իր հոգիին մէջէն. Ալի Հասանի արհամարհոտ յանդիմանութիւններէն աւելի զինքը խարազանեցին կեսրոջը ատելալատ եւ կծու ակնարկութիւնները. մէկէն ի մէկ ըմբռնեց որ անիրաւ եւ իրեն նկատմամբ ու իր սէրը եւ իր անսահման գորովանքը ոչնչի տեղ կը դնէն, չեն ուզեր հաշուի առնել զայն երբ ինքը այդ սանձարձակ սէրէն մղուած պատրաստ էր մեռնելու անոնց համար:

Ներքին խոր դրդում մը զինքը սթափեցուց իր լռին համակերպութենէն. ինք ալ չէր գիտէր թէ ի՞նչ է այդ դրդումը, չէր զգար որ աստիկա մարդկային արժանապատուութեան սրբազան զգացումն էր, կ'ուզէր նոյն իսկ զայն մեղմացնել, զայն ճնշել ու լռեցնել, բայց եւ կը զգար որ իր ջանքերը ապարդիւն էին. իր աշքերը հետզհետէ բացուեցան իրական կացութեան. ուզեց ելնել իր որսացուած անասունի դերէն. ուզեց որ իր կամքը եւ իղձերը իրենց դերերը կատարեն ամուսնական կեանքին մէջ. յիշեց իր հօրը եւ մօրը ներդաշնակ կենցաղը ու անով անրապնդուած կազմեց հետզհետէ իր կնոջական արժանապատուութիւնը. բայց ինչ որ շատ դիւրին պիտի ըլլար առաջին օրերուն, այլեւս դժուար էր. իր խակութեան հետեւանքով կորսնցուցեր էր բոլոր պատեհութիւնները. հիմակ այլեւս կը զգար որ ամուսնոյն եւ կեսրոջը տիրապետութիւնը անխզելի է, թէ ինքը ո եւ է կերպով չի կրնար ներգործել անոնց վրայ, թէ ինքը կապկպուած է շղթաներով եւ բանտարկուած է ընդունուած սովորութիւններու ցանցի մը մէջ:

Երբ իր ծնողքին այցելութեան կ'երթար, ինչ որ կը պատահէր շատ ցանցառօրէն. իրեն կ'ընկերանար պառաւ աղախին մը որ հանրմի ձեւեր կ'առնէր Սալաճաքի

համեստ տնակին մէջ: Իսլամական սքանչելի պարգութեամբ, առանց գայթակղելու, Իսլամահիմի կինը կը մեծարէր զայն եւ ամէն անգամ, վերադարձին, Ատիլէ կը զգար որ իր տան ծառան անգամ արհամարհոտ էր իրեն նկատմամբ. անհկա Ջէհէր հանրմին կը հաղորդէր համեստ տնակին սովորութիւններէն մանրամասնութիւններ, ցաւելով կը յիշեցնէր որ Ալի Հասանին արժանի աղջիկ չէր այդ պայդարին աղջիկը ու հակակրութեան ցանցը ալ ատելի սեղմ կը զգար Ատիլէ իր շուրջը:

Ոչ մէկ օր, անհկա իր ներքին ցաւերուն ու իր հոգերուն վրայ խօսած էր ծնողքին. բայց Իսլամահիմ զգացեր էր որ իր աղջկան երջանկութիւնը հետզհետէ կը մարեր մտահոգութեանց մէջ եւ իր խաղաղ դէմքին վրայ տխրութեան ստուերը երեւցեր էր այն օրէն ի վեր:

Իրիկուն մը Ատիլէ, ամուսնոյն երկար ժամեր սպասելէ ետքը, բազմոցին վրայ պառկեցաւ. հագիւ թէ կը մրափէր երբ ընդոստ արթննալով սանդուղներուն վրայ լսեց Ալի Հասանի սուրին աղմուկը. ոտքի ելաւ, մագերը շտկեց եւ սրտատրոփ սպասեց: Չոյգ մը մոմերու պլպլացող լոյսին մէջ տեսաւ անոր հասակը ու քարացած մնաց: Անոր դէմքը մոլորուն արտայայտութիւն ունէր, աչքերը տենդահար մարդերու աչքերուն կը նմանէին. գօտին թուլցեր էր ու սուրը կը քաշքշուէր գետնին վրայ խլեակի մը պէս:

Միրակա՛նս, հոգիս, ինձի՞ սպասեցիր:

Ջինտորականին ուժեղ կուրծքը ճնշեց Ատիլէի ուտերը որ դէպ ի ետ ընկրկեցան, բայց երկու վայրագ բազուկներ սեղմեցին դեռատի կինը ու անհկա նողկանքի եւ սոսկումի խառն զգացումով մը զգաց ամուսնոյն գինովութիւնը:

Ո՛չ, ո՛չ, հեռու գնա...

Ատիլէ բռնուած թռչումի մը պէս յուսահատ ջանքեր կ'ընէր, իր անգօր ձեռքով ետ կը մղէր զայն ու զգուանքով դէմքը անդին կը դարձնէր:

Յանկարծ կոյր եւ վայրագ գայրոյթ մը բռնկեցաւ Ալի Հասանի երակներուն մէջ. մէկ ճիգով բարձրացուց կինը ու գետին նետեց զայն. ու սենեակին մէջ

խելայեղօրէն պտուտկելով սկսաւ հայհոյութիւններ ընել:

Սա լիրբին նայեցէ՛ք, սա՛ անհարազատին նայեցէ՛ք... ափ մը ցե՛խ, որ ուզած
ատենս կրնամ ճգնել ներբանիս տակ արհամարհելի ու չքոտի արարա՛ծ,
ինքզինքդ բա՞ն մը կարծեցիր, որովհետեւ քէֆիս եկաւ քեզի մինչեւ ինծի
բարձրացնել:

Անոր մոլորած աչքերուն առջեւ կարմիր ու դեղին բոցեր կը պարէին ու գայրոյթը
կը հրահրուէր կնոջը լոռութենէն, պիտի ուզէր որ անիկա աղաղակէր, ճշար, բայց
անոր անշարժութիւնը ու լոռութիւնը զինքը կը մտրակէին նախաստինքի մը պէս:

Աւելի սաստիկ, հետզհետէ ւաւելի խելայեղ, բարկութիւնը կը գոռար անոր օղիէ
գերագրգռուած ուղեղին մէջ. աչքերը դարձան, այլեւս իր շարժումներուն տէրը
չէր, մղձաւանջային տարտամութիւն մը զինքը կը պարուրէր. ուժգին
հարուածներու աղմուկը իր ականջին կը հասնէր առանց զինքը սթափեցնելու,
կարծես իր բազուկները չըլլային այդ հարուածները տուողը:

Փոթորիկէ մը ւաւերուած շուշանի պէս, Ատիլէ ֆիզիքական եւ բարոյական ցաւէն
ինքնակորոյս, իր պատռտած հագուստներուն մէջ կ'զգար բիրտ հարուածներէն
վիրատրուած մարմինը ու անսահման զգացում մը անէութեան՝ կը գրաւէր իր
հոգին. ո՛չ լաց, ո՛չ աղաղակ, իր հպարտութեան զգացումը լռած էր այլեւս ու
ցաւագին զարմացումով կ'աղբաղաւորէր որ մահուան եւ սիրոյ զգացումները
հեշտագին սարսուռի մը պէս կ'անցնէին իր երակներէն:

Երբ Ատիլէ բոլորովին սթափեցաւ, խոր լոռութիւն մը տիրէր տան մէջ. արշալոյսը
դեռ չէր ծագած, բայց քաֆէսներուն ետեւէն գիշերը կ'անօսրանար եւ կը
տժգունէր. այդ պահուն իր կացութեան սուկումը զինքը պատեց ու ցրտօրէն
կրցաւ մտածել պատահածին վրայ. թէեւ դեռ ներողամտութեան վարանք մը կար
իր մտածումին մէջ Ալի Հասանի նկատմամբ, բայց հետզհետէ զգաց որ կարծր եւ
անդիմադրելի զգացում մը կը տիրանար իրեն ու կը մերժէր հաշտութեան ռելե
եզր: Խոպոտ եւ շնչաց հեւք մը իր մտածումը ընդհատեց եւ խորհեցաւ որ անիկա
Ալի Հասանը ըլլալու էր որ զինովներու յատուկ խոովուած քունով կը քնանար
անկողնին վրայ նետուած, առանց հանուելու:

Հետեւեալ օրը իր կեսրոջ խոժոռ եւ յանդիմանական դէմքէն խուսափելով, Ատիլէ իր սենեակին մէջ առանձնացաւ. կեանքը կը սկսէր տխուր եւ լեղի դառնալ իրեն համար. խոշտանգուած մարմինը անտանելի ցաւեր կը պատճառէր իրեն, տենդը կը չորցնէր շրթունքը ու լալու փափաք մը կը կարծրացնէր իր կուրծքը եւ կոկորդը. անհկա արցունքներ կու տալով եւ ցաւագին մարմինը քաշքշելով կը պտուտկէր սենեակին մէջ երբ կեսուրը երեցաւ:

Ռ՞ր ես, ի՞նչ ես եղեր. նագրդ որի՞ է:

Հիւանդ եմ, Աննէ՛, հեծկլտաց Ատիլէ ու մէկ անգամէն յորդառատ արցունքներ ժայթքեցին իր աչքերէն:

Անհկա կուլար բոլոր մարմնովը ցնցուելով, մանկան պէս բարձրաձայն ու այնպիսի սրտառուչ անկեղծութեամբ մը որ ձայնը կը թրթռար երկարօրէն ողբական եւ յուսահատ:

Միջոց մը կեսուրը լուռ մնաց. հանդիսատր կեցուածքով կը մրթնած էր պատին ու չէր գիտեր ինչպէ՞ս պատասխանել ցաւի այս արտայայտութեան. յուզմունքի ալիք մը կը բարձրանար իր հոգւոյն մէջ ու զինքը կը մղէր գթասիրտ խօսքի մը, գորովագին շարժումի մը որ պիտի ամոքէր ու մոռցնէր տար Ատիլէի՝ իր ցաւը, բայց այս ինքնաբոլիս զգացումը վիժեցաւ ու նախկին պալատականի հոգիին մէջ հպարտութեան եւ փառասիրութեան չար դելը գոռաց:

Նախ ինքն ալ չէր հաւատար իր շրթներէն ելած խօսքերուն ճշդութեան, բայց հետզհետէ տարուեցաւ անոնց կիրքէն ու իր սեւ աչքերը վառեցան անհաշտ ատելութեամբ:

Ալչաք արարա՛ծ, ամբարտաւան, ուղուրսըզ աղջիկ, ուրկէ՞ ուր իմ սեմէս ներս մտար ու դժբախտութիւն բերիր մեզի... այս յարկին տակ, մինչեւ այսօր լաց ու հառաչանք չէր լսուած ու հիմա քու պատճառաւ սգաւոր տուն է դարձեր, նագրդ որի՞ է... փոխանակ ինքզինքդ փառաւորուած զգալու՝ դուն տղուս քէֆը հարամ կ'ընե՛ս... դուն իրեն պարտական ըլլալով բացարձակ հնազանդութիւն, գլուխ կը բարձրացնե՛ս... բայց դուն չես գիտեր թէ ի՛նչպէս պիտի ջախջախուի այդ գլուխդ...

Աւելի ուժեղ, ատելի հեծեծագին Ատիլէի լացը կը պատասխանէր Ջէիէն հանրմի
ձայնին:

Վա՛խ, վա՛խ, վա՛խ... մեղք իմ կտրիճ գաւակիս. մեղք իմ առիծիս... դուն չե՞ս
մտածեր որ ինչպէս եկար, այնպէս ալ կ'երթաս. թէ բաղդը քեզիպէսներուն
համար հեղեղի մը կը նմանի՛... անմիտ ու անշո՛ւք արարած, դուն չե՞ս խորհիր
որ տղոս ոտքին փոշին չե՛ս, ուրկե՛ որ սորվեցար գլուխ բարձրացնել, շատ
սերո՛ւնդ...

Ատիլէի լացը լռեց... կեսրոջ հրացայտ աչքերուն սեւեռեցան ուրիշ աչքերը
մատղաշ եւ վայրենի կենդանիի աչքեր...

Ես պայդար Իպրահիմի աղջիկն ե՛մ...

Ինչո՞ւ կ'արտասանէր այդ խօսքերը եւ ինչո՞ւ կը փառաւորուէր իր հօրնով, ինքն
ալ չէր գիտեր, բայց իր ձայնին մէջ կար այնպիսի շեշտ մը ուրկէ Ջէիէր հանրմ
ագդուեցաւ ու անոր սրտին կարծրութիւնը թուլցաւ. մինչ Ատիլէ կը կրկնէր
հեկեկալով,

Ես պայդար Իպրահիմի աղջիկն եմ:

Բայց անիկա այդ պահուն զգաց որ շրթները կը պաղէին, մեքենաբար ու
թոթովելով կը ճգնէր կրկնել այդ բառերը, բայց այլեւս լեզուն չհնազանդեցաւ իր
ջանքին, արագ սարսուտ մը անցաւ կոնակն ի վար, գլուխը դարձաւ, սրունքները
դեղեւեցին ու երբ կը պատրաստուէր դէպի բազմոցը երթալ, կոնակն ի վար
ինկաւ, արմատէն կտրուած ծառի մը պէս:

Օ՛ֆ, օ՛ֆ... այս ինչ ձիւն էր եկաւ գլուխս, այդ անիծուած աղջկան պատճառած
հոգը, պատճառած ծախսը վերջ չունի՛... տղոս հանգիստ խոռվուած է...
անիկա գիշերը քուն չունի, ցորեկը խաղաղութիւն չունի... ասոր վերջը ո՞ր պիտի
երթայ:

Ատիլէ հիւանդ պատկած էր ու Ալի Հասան՝ խղճահար իր վարմունքին համար.
մեծ գուրգուրանքով կը խնամէր զայն եւ այլեւս ականջ չէր կախեր մօրը յարատեւ
տրտունջներուն:

Բժիշկը լրջութեամբ խօսած էր ամուսնոյն հետ եւ այս վերջինը չէր գիտեր ի՞նչպէս դարձանել իր ըրածը: Չեղհեաւ Ջէիլը հանրմ տեսնելով որ իր անտարբերութիւնը խորթ կը թուէր տղուն, մտահոգ երեւցաւ, նաեւ անկեղծօրէն փափաքեցաւ որ Ատիլէ առողջանայ, մտածելով որ հիւանդութիւնը գայն աւելի շահեկան կը դարձնէր Ալի Հասանի աչքին:

Հակառակ որ հիմակ տղան շատ կը շփացներ կինը, իր փորձառու կնոջ հոտառութեամբ կը զգար որ բան մը կար որ անդարմանելի կերպով խզուած էր անոնց մէջ եւ թէ այդ կարգի կրիւնէր, եթէ ոչ նոյն ուժգնութեամբ բայց յաճախակի՝ տեղի պիտի ունենային անոնց մէջ. եւ այդ անհամաձայնութեանց վերջնական արդիւնքը գուշակել դիւրին էր:

Երբ Ալի Հասան անհամբեր ու շնչասպառ, զօրանցէն տուն կուգար, մայրը կը գտներ յաճախ Ատիլէի քով եւ երախտապարտութեամբ աչքերը կը լեցուէին, խորապէս կը սիրէր անհկա իր կինը ու անգիտակցութեան մը բռնալին անոր հետ ունեցած բիրտ վարմունքը պատճառ մը չէր համարէր ցրտութեան. ընդհակառակը, գայն շատ աւելի կը սիրէր, գայն ցաւցուցած ու վիրաւորած ըլլալով, կարծես աւելի տիրացած էր անոր եւ այս զգացումը այնպիսի սրտազեղում մը կը պատճառէր իրեն որ նոյն իսկ երբ հեռու եղած ատեն կը յիշէր, հոգին կը թուլնար ու սիրոյ տենդը նորոգ խոյանքով մը կ'անցներ իր էութեան մէջէն:

Երբ Ատիլէ առողջացաւ, Ջէիլը հանրմ միջոց մը լաւ վարուեցաւ հետը. ուրիշ կարգի ծրագիրներ կ'որուագծուէին իր հնարամիտ կնոջ մտքին մէջ, շատ լաւ կը ճանչնար մարդկային տկարութիւնները եւ վարժ էր գանոնք վարուելու այս կամ այն ուղղութեան. հասկցաւ թէ ինչպէ՞ս պիտի յաջողէր իր տղան Ատիլէէն բաժնելու եւ այլեւս պատեհ չհամարեց իր հարսին հետ գէշ վարուիլը, քաղցրօրէն կը յանդիմանէր գայն այդպիսի դէպքեր տեղի տուած ըլլալուն համար եւ երբ Ատիլէ ինքզինքը արդարացնելու համար կ'ըսէր թէ այն օրը Ալի Հասանի գինովութենէն էր որ խորշած էր, Ջէիլը հանրմ լրջօրէն եւ հանդիսաւորապէս կը պատասխանէր:

Ի՛նչ կ'ուզէ ըլլա՛յ... ի՛նչ կ'ուզէ ընէ, էրիկ մարդ է անհկա:

Ատիլէ երկար օրեր մնաց շատ տժգոյն եւ տխուր. մասնաւոր մտասելեռում մը գինքը փոխն ի փոխ կ'անցնէր յոյսի եւ տարակոյսի տագնապներէն. իր նոր ապաքինած հիւանդի աչքերուն մէջ տենդագին կենսունակութիւն մը կար եւ միեւնոյն ատեն սրտառու խոնաութիւն մը. իր ձայնը առեր էր հեծկլտանքի բեկբեկ եւ մելամաղձոտ շեշտը. իր գեղջուկի ձեռքերը նիհարցեր ու ճերմկեր էին ու մատները կը բարակնային հիւծախտաւորներու մատներուն պէս: Յաճախ հոգիին խորէն հառաչանք մը մինչեւ շրթները կը բարձրանար եւ մտահոգ կը մնար՝ քանի մը թոպէ սրտին ցաւը մտիկ ընելով:

Իրեն օգնելու համար հեռաւոր թաղի մէջ բնակող կեսրոջը մէկ բարեկամուհին դեռատի աղախին մը դրկած էր իրենց. երկու երիտասարդ կիները առաջին չէին սիրած գիրար, որովհետեւ Ատիլէ անտանելի գտեր էր նորեկին համարձակութիւնը, հեզնող ակնարկները եւ ճարպիկ աղջկան բանիմաց նենգութիւնները: Մագպուլէ ունէր նաեւ դիւային շնորհ մը որ առանց գեղեցկացնելու հրապուրիչ կը դարձնէր գինքը. անոր ճկուն շարժումները, դիտմամբ փախուստները եւ կիսաբաց դռներէ արձակած ճիչերը ու քրքիջները կը խնդացնէին Ալի Հասանը որ Մագպուլէի հետ կը կատակէր եւ անով կը հետաքրքրուէր: Երբեմն ալ չափը կ'անցնէր մանաւանդ երբ Ալի Հասան խմած ըլլար եւ Ատիլէ ժամեր ու ժամեր կը հանդուրժէր այդ կնոջ ներկայութեան իր սենեակին մէջ:

Առաւօտ էր, եւ Ալի Հասան նոր մեկներ էր տունէն երբ Մագպուլէ Ատիլէի սենեակը մտաւ ծառայելու համար: Յանկարծ Ատիլէ կեցաւ աղախինին դիմաց ու խստութեամբ ըսաւ անոր:

Ես այլեւս չեմ ուզեր որ երբ պէյը այս սեմէն ներս մտնա՛յ, դուն որ եւ է պատճառաւ երեւաս իրեն:

Գլխուս վրայ, հանրմս...

Մագպուլէ կը շարունակէր սենեակը կարգի բերել եւ միւս կողմէ կը լսէր հազիւ զսպուած լկտութեամբ:

Ո՛չ, ես այլեւս երբէ՛ք, երբէ՛ք այդպիսի բան չեմ ուզեր...

Ատիլէ շուարեցաւ ու քանի մը անգամ կրկնեց արգելքը յանդիմանական շեշտով մը, արիւնը կ'եռար երակներուն մէջ եւ տաք ալիք մը բարձրացաւ մինչեւ այտերը, մինչեւ ճակատը ու քունքերուն մէջ զգաց արագ եւ զօրաւոր թնդիւններ. միեւնոյն ատեն մտածեց. «Իրաւ է որ գեղեցիկ չէ՛, բայց իրաւ է նաեւ որ շէյթանի հրապոյր մը ունի» ու ցաւագին մտածում մը գալարեց զինքը հոգեկան խոր ցաւով:

Ո՞ր է Մագպուլէն:

Պէ՛յս պատասխանեց Ատիլէ հեկեկագին ձայնով մը, պէտք չունինք իր ծառայութեան, ես քու աղախինդ չե՞մ, ինչ որ ուզես ինձի ըսէ:

Կանչէ՛ Մագպուլէն:

Պէ՛յս... արցունքներ խեղդեցին Ատիլէի ձայնը ու սկսաւ հեծկլտալ:

Օ՛ֆ... օ՛ֆ... կեանքը դառնահամ սկսաւ դառնալ, Ատիլէ՛... գուարթութիւնդ երկշոտ թռչունի մը պէս թռաւ գնաց, ու դուն ճզղած տղոյ մը պէս անտանելի դարձար... դուն չեն ուզեր կանչել Մագպուլէն, ես իրեն կ'երթամ:

Երբե՛ք, երբե՛ք այլեւս ոտքը չպիտի դնէր այդ անիծեալ սեմին վրայ... Ատիլէ աճապարանքով կը հագուէր ու իր ցաւատանջ մտածումով ամբողջ գիշերը թափառելէ ետքը կսկծալի հաւանականութեանց շուրջը, հիմայ կը խուսափէր կարծես իր ցաւէն, կը խուսափէր իր դժոխային չարչարանքէն:

Առաւօտը նոր ծագեր էր, աշնանային գովութիւն մը սարսուռով կը համակէր իր անձը, քամին կը փչէր տանիքին վրայ ու նեղ փողոցներէն սուրալով կ'անցներ բուի պէս վայելով: Ատիլէ կ'ուզէր մեկնիլ ո եւ է մէկը չտեսած, ո եւ է մէ՛կը, այդ անիծեալ էակներէն որոնց իւրաքանչիւրին կեանքի նպատակն էր կարծես իր երջանկութիւնը փշրել. իր աչքերը լալէն կուրցեր էին, ու շրթները ողբալէն տժգուներ. բայց որո՞ւ հոգն էր՝ ու կարծես լրացնելու համար իր տառապանքը ու իր կրած նախաստինքները նոյն յարկին ներքեւ, իր քովի սենեակին մէջ Ալի Հասան հարճ առեր էր այդ նորեկ աղախինը...: Գիտէր, շատ լաւ գիտէր թէ ինչպէս պիտի պախարակէին իր փախուստը, որքան անմիտ ու բան չգիտցող պիտի նկատէին զինքը... բայց ինքը, Ատիլէ, պայտար Իպրահիմի աղջիկը,

այդպիսի բանի մը չէր կրնար հանուրժել, ե՛րբեք, ե՛րբեք...

Ոչ իսկ կը մտաբերէր թէ պատահածը սովորական եւ առօրեայ դէպք մըն էր, ոչ իսկ կը խորհէր թէ առանց այդ համեմատութիւնները տալու այդ դէպքին՝ կարելի էր լռութեան եւ համակերպութեան մէջ խղդել իր ցաւը. այլ ընդհակառակը իրեն կը թուէր որ այդպիսի չարչարանք ոչ մէկ կին չէր կրած, ու այդպիսի գիշեր ոչ մէկ Իսլամուհի չէր անցուցած:

Ուրուականի մը պէս անշշուկ սահեցաւ սանդուխներէն ու խելակորոյս փախստականի պէս անցաւ փողոցներէն. հագիւ թէ ինքնամփոփումի թոպէ մը կըրցաւ ունենցալ շոգենաւին մէջ որ զինքը դէպի Սալաճաք կը տանէր: Անիկա հագեր էր սեւ պիւրիւմ մը եւ երեսը ծածկեր էր անթափանց եւ նոյնպէս սեւ փէշէով. անիկա ոչ մէկ թոպէ իր երեսը բացաւ մինչ քանի մը ցանցառ թրքուհիներ հետաքրքրուած իր լռութենէն, հարցումներ կ'ուղղէին իրեն...

Ճահիլ է, բայց սիրտը ցաւած է, բարունակի մը կը նմանի որ կարկտահար եղած ըլլայ կ'ըսէր կին մը իր քովինին:

Ա՛խ... ա՛խ... որուն որ սիրտը կը վառի անիկա կը հասկնայ, կ'ըսէր պառաւ մը, փորձառու շեշտով մը:

Ի՞նչ ցաւով սիրտդ կը ցաւի, կը հարցնէր երիտասարդ կին մը սրտառուչ մտերմութեամբ մը...

Ու բէշէին ներքեւէն անընդհատ Ատիլէի աչքերը կ'արտասուէին:

Յուրտ էր եւ առաւօտեան քամին կը մտրակէր զինքը: Փոթորկալի եւ մոլեգին ամպեր կը կուտակուէին երկնքին վրայ. շոգենաւին կտաւները կը ծեծուէին ու կը շառաչէին կարծես մօտալուտ եւ աղետալի ժամեր ազդարարելով: Թանձր եւ դառնագին տխրութիւն մը կը ծածանէր քաղաքին վրայ ու Ատիլէի կը թուէր որ ամբողջ աշխարհ իր սուգը կը բռնէր:

Սալաճաքի բարձունքին վրայ Իպրահիմի տնակին մէջ, կեանքը միջոց մը ալեկոծուելէ ետք ստացեր էր իր խաղաղ եւ կայուն հանդարտութիւնը, բայց այդ խաղաղութիւնը առերեւոյթ էր եւ բոլոր հոգիները վրդովուած մնացեր էին Ատիլէի

կրած նախատինքով ու ցառով:

Այր ու կին երկու ծերունիները ինքզինքնին արտայայտել էտքը իսլամի վայել սակաւապետութեամբ այլեւս կը լռէին ու թէւ յարատեւ կերպով կը խորհէին իրենց աղջկանը դժբաղդութեանը վրայ, բայց այլ եւս պատշաճ չէին համարեր այդ մասին խօսիլ ու իրենց հոգեկան տրամադրութիւնները ի յայտ բերել: Մռայլ, խոժոռ եւ անփոփոխելի տխրութիւն մը յաջորդեր էր երբեմնի ժպտուն պարգութեան ու այդ լռին մելամաղձութեան մը բոլորին հոգիները հաղորդակից էին անսահմանելի նրբութեամբ մը...

Ատիլէ շատ փոխուած էր. հիւանդագին նիհարութիւն մը այլափոխեր էր անոր դէմքը որուն վրայ աչքերուն լոյսը կը նուաղէր. վիշտի եւ յուսախաբութեան ծալք մը վաղահասօրէն կը թառամեցնէր իր այտերուն փափկութիւնը ու իր թխրակ մորթին տակէն արիւնը վառեր, վառեր ու հատեր էր կարծես, այնքա՛ն գունատեր էր, դիակնային տժգունութիւնով մը:

Երբեմն, ծայրայեղ խնամքով քողարկուած, կը պտտկէր պարտեզին մէջ, ուր ծառերը տերեւաթափ կ'ըլլային եւ իրենց մերկացած ճիւղերը կը ցցէին հիւսիսային հովերէն դողդոջելով. յամր եւ անխուսափելի քայքայումը զինքը շրջապատող բնութեան՝ կ'արժարժէր իր տխրութիւնը եւ աչքերը տաժանքով կը պտտցնէր իր շուրջը: Երբե՛ք, այլեւս չէր դառնար այն կողմը ուր առաջին անգամ իր սիրականը երեցեր էր... մարգագետինը թառամեր էր եւ այլեւս չկային անոր թաւշեայ դալարին ծանրագին գորգի մը պէս պիտակող ճերմակ եւ գունագեղ ծաղիկները. այլեւս դեղնած եւ չոր ձողերը երբեմնի դալարագեղ բոյսերուն՝ ստեւներու պէս կը ցցուէին ցանցառօրէն կարծրացած հողին մէջէն, ուր դեզերող արօտականները հայրենաբաղձ բառաչիւններով գալիք գարունները կ'երագէին: Ու արեւը երբ երեւնար, մթին եւ հոժ ամպերու մէջերէն կը լուսաւորէր իր ճերմակ եւ ջերմութենէ գուրկ ճառագայթներովը այս ոգետրող բնութիւնը:

Երբեմն ալ Ատիլէ կը նստէր դրանը սեմին վրայ ու կգակը ափին կրթնցուցած՝ կը խորէր երկարօրէն, ո՛չ մէկ թշնամական զգացում, ո՛չ մէկ դառնութիւն չէր մնացած իր մէջ: Օրերու ընթացքին Ալի Հասանի նկատմամբ իր ունեցած քէնը եւ իր կրած նախատինքին յիշատակը մեղմացեր էին, բայց կ'զգար որ, հակառակ ամէն բանի, իրարմէ բաժնուած էին. քանի որ շատ մը օրեր անցեր էին ու անիկա

ոչ մէկ ջանք ըրեր էր իրեն մօտիկանալու, հաշտութիւն առաջարկելու. ինչպէ՛ս, հլու եւ հնազանդ, թէեւ գլխիկոր, պիտի մտնէր վերստին ամուսնոյն հովանիին ներքեւ, փարափի մէջ մտնող ոչխարի մը նման, ինչպէ՛ս, խռովքի եւ տարփանքի ժամերու մէջ կարօտով կը յիշէր գայն, անոր բրտութիւնները, անոր հարուածներն իսկ եւ իր հոգին ծարափ էր անոր սիրոյն:

Երբ այսպէս, վիզը ծուռ, նայուածքը մոլորուն, կ'երագէր, յաճախ իր մօտ կ'զգար Ճէմիլին ներկայութիւնը, անոր հեւքոտ շնչառութիւնը եւ բոցավառ աչքերը կը հետապնդէին զինքը, խանգարելով իր հոգիին ցաւագին ներդաշնակութիւնը: Ատիլէի նոր կացութիւնը արծարծեր էր Ճէմիլի յոյսերը եւ յաւականութիւնները, եւ երիտասարդ ձիադարմանը իր յամառ սիրով կը տանջէր զինքը:

Ո՛չ, ո՛չ... ըսեր էր Ատիլէ կտրուկ եւ վճռական շեշտով՝ անգամ մը երբ Ճէմիլ խօսք բացեր էր իրեն իր զգացումներուն մասին ու հիմակ ամէն անգամ որ գայն կը զգար իր շուրջը, գլուխը կը բատձրացնէր ցանկապատէն անդին, կը տեսնար անոր արեւակէզ դէմքը, մոլար աչքերը, մագերու սեւ փունջը ճակտին վրայ ու ահաբեկած, անոր համր աղերսանքին կը պատասխանէր գլուխը շարժելով մերժողաբար:

Այդ պատճառաւ էր որ Ճէմիլ սեւ յուսահատութենէ բռնուած՝ կը թափառէր երեկոները գինետունէ գինետուն. ու վերադարձին՝ Ատիլէ քունէն արթննալով կը լսէր անոր գոռ եւ վայրենի ձայնը որ տարերային ուժգնութեամբ մը կը բարձրանար ու կը հասնէր մինչեւ իր ականջին:

«Անօրինակ ցափ մը մէջ ինկած եմ.

«Որ ոչ կը քնացնէ զիս եւ ոչ կ'սքափեցնէ

«Ու օրէ օր իմ վիշտ կ'աճեցնէ՛...»

Հակառակ իրեն Ճէմիլի հրայրքը զինքը կը խռովէր, մինչ իր սիրոյ եւ հեշտանքի գիշերներու բոլոր յիշատակները, այդ տարփաւէտ եւ տրտում երգերով կենդանացած, նոր իրականութեամբ մը կ'անցնէին տեսիլքի պէս իր չարչարուած մտածումին մէջէն:

Ի պրահին, թե՛ հոգեկան, թե՛ ֆիզիքական մեծ ցնցում կրեց Ատիլէի պատահած դժբախտութեան վերահասու ըլլալով ու իր հպարտ եւ արժանատր հոգին ընթոստացաւ իր աղջկան միջոցաւ եւ իրեն եղած նախատինքին դէմ. սրտնտութեամբ եւ հետզհետէ արհամարհանքով մը խորհէր այդ երիտասարդ սպային վրայ, որ չէր գիտցած գնահատել Ատիլէի պէս քնքուշ եւ սիրագեղ կին մը:

Ջայրոյթով կը մտաբերէր որ իր աղջկան միամիտ եւ անսեթեւեթ պարզութիւնը. պայծառ գուարթութիւնը հրապուրելէ ետքը այդ պղտոր գուարճութիւններէ յափրացած զինուորականը՝ վերջապէս գայն ձանձրացուցեր էր... ուրեմն, իբր հա՛րճ ընդունէր էր իր աղջիկը, իր, Ի պրահինի աղջիկը...

Եթէ կարենար իր կարկամած սրունքներուն վրայ կանգնելու ու երթալ այդ ապականուած երիտասարդութեան երեսին նետել իր բոլոր զգացած նողկանքը... եթէ կարենար երթալ ու յայտնել անոնր որ իրենց հայրերը ու հաւերը աւելի զօրատր եւ յաղթական եղած էին միշտ, որովհետեւ պողպատի պէս կարծր եւ անընկճելի էր իրենց վեհանձնութիւնը եւ առաքինութիւնը... Բայց ինք անկողնին գամուած թշուառ մըն էր ինք, որ թշնամիին աչքերուն մէջ նայած էր առանց իր արտեւանունքը քթելու, ինք որ իր գայրոյթի բոպէններուն առիծ դարձած էր, հիմակ շղթայուած ու անզօր կը մնար՝ ինչպէս մեռելը իր գերեզմանին մէջ ու չէր կրնար երթալ հաշի պահանջել իր մէկ հատիկ աղջկանը եղած նախատինքին:

Ի պրահին այլեւս հաշտութիւն չէր ուզեր. ան ո՛չ, այլ վերջնական խզում. ինչո՞ւ աղջիկը կապուած կը պահէին, ինչո՞ւ այդ վատ զինուորականը չէր արձակէր գայն. առաջին օրէն իսկ Ճէմիլի միջոցաւ «փուսուլա» մը դրկելով՝ այդ պահանջքը դրեր էր իր փեսին:

«Ես, Ի պրահին, կ'ուզեմ որ իմ աղջիկս արձակես»

Ու ո՛չ մէկ պատասխան:

Ի պրահին, իր հիւանդութեան տաժանելի շրջանին մէջ, առաջին անգամը ըլլալով՝ դառնացաւ իր վիճակին վրայ: Իր անդամները աւելի ծանր թուեցան

իրեն, մահը կամայական ու հեռաոր. անհկա դառնօրէն զգաց որ անհետացող սերունդի մը յետամնաց մէկ անդամն էր. ինչո՞ւ իր աչքերը բաց կը մնային, ինչո՞ւ իր շրթները չէին պաղեր մահուան սատնային համբոյրով: Իր դիակնացած անդամներուն վրայ որոնք շարժում եւ ուժ կորսնցուցեր էին, գլուխը կ'ապրէր միայն եւ իր իմացականութիւնը կը մնար յստակ ու կորովի տատապելու ու գայրանալու համար:

Իր շատ թուխ եւ ճերմակ մօրուքով շրջանակուած դէմքին վրայ աչքերը ցաւագինօրէն կը տատապէին՝ ամէն անգամ որ իր նուաղած նայուածքը հանդիպէր Ատիլէի:

Օ՛Ֆ, օ՛Ֆ... ամենակարող Ալլա՛հ, ինչո՞ւ կեանքը դառնահամ պտուղի մը նման է:

Դարձեալ «մուէզգին»ի բարեպաշտիկ կոչին՝ իր կինը կուգար «նամագ»ը ընելու, որուն կ'ընկերանար ծերունին իր նայուածքով. բայց իր դողդոջուն շրթներուն վրայ սրբասուն բառերը կը կորսնցնէին կարծես իրենց իմաստը ու իր հոգիին խաղաղութեան հետ մարեր էր նաեւ այն աստուածային ոգին որ իր տաժանելի կեանքը կը թեթեւցներ:

Վերջին երկրպագութիւնները ընելէ ետքը, պառաւր պահ մը ծալլապատիկ կը նստէր փսիաթին վրայ ու ամէնքն ալ լուռ կը մնային, խորասուզուած առանձին մտածումներու մէջ:

Օ՛Ֆ... օ՛Ֆ... ճակատագիրը սեւ է... կ'ըսէր վերջապէս պառաւր, պատասխանելով իր սիրելիներու վրդովմունքին:

Դարձեա՛լ, մայրամուտին, երբ Ատիլէ սեմին վրայ նստած, երեսը ափին մէջ կը խոկար, Իպրահիմին կինը Գուրան կը կարդար ու երկար ատեն անոր երգող եւ տխուր ձայնը կը հնչէր երկարածգուելով հեծեծագին ելեւէջի մը մէջ: